ՄԶՄԿ
ICHD
Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
International Center for Human Development
FRIEDRICH EBERT STIFTUNG

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՈՒԺԵՐԻ ՀԱԾՎԵԿԾԻՌ.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

19 Սայաթ Նովա, Երեւան

Հեռ.՝ +3741 58-26-38, Ֆաքս՝ +3741 52-70-82, Էլ.փոստ՝ mail@ichd.org, Ինտերնետ էջ՝ www.ichd.org

Ստատուս-քվո

Հայ-ադրբեջանական ճակատում արդեն շուրջ մեկ տասնամյակ շարունակվող զինադադարը երկու կողմերը յուրովի են մեկնաբանում՝ վերագրում հօգուտ: Իրավիճակը նպաստավոր է գնահատում հայկական կողմը. Ղարաբաղում նոր սերունդ է աճում, որ չգիտի ինչ բան է Ադրբեջանի կազմում ապրել, ի վերջո՝ ժամանակակից հայտանիշերով օժտված պետական նոր միավոր է կայանում, որ անպայման պիտի իր դերակատարումն ունենա հնարավոր լուծումներում: Ադրբեջանը գիտակցում է սա և անում հնարավորը դրան խոչընդոտելու համար:

Իրավիճակն իր համար նպաստավոր է գնահատում նաև Ադրբեջանը: Վերջինս տնտեսապես հզորանալու հայտ է ներկայացնում՝ նախ և առաջ ի հաշիվ սպասվող նավթային միլիարդների: Որքանո՞վ է ադրբեջանական հաշվարկը իրատեսական, ի՞նչ լրջությամբ է այն վերլուծվում Հայաստանում, ի՞նչ պետք է անել և ի՞նչ է արվում ընդդեմ: Մի բան պարզ է՝ սրանք հարցեր են, որ հաճախ չեն դառնում պատշաճ քննարկման առարկա:

Այսօր: Իսկ վա՞ղը ...

Տնտեսական զարգացման ընդհանրական ցուցանիշներով Հարավային Կովկասի երկրները վերջին 2-3 տարիներին դրվատանքի արժանի արդյունքներ են ցուցադրում: Եթե տասներեքամյա կուտակային զարգացումների տեսանկյունից կարելի է արձանագրել, որ Հայաստանն իր արդյունքներով իրավամբ առաջ է, նույնը սակայն դժվար է պնդել ապագա զարգացումների հնարավոր սցենարների համադրության համատեքստում: Ահա հենց այստեղ է, որ «այլ հավասար պայմաններն» իրոք սխալ է ամրագրել, և վրացական «վարդերն» ու ադրբեջանական նավթը կարող են էական դերակատարում ունենալ, իսկ «Սփյուռք» տնտեսական գործոնն ակնհայտորեն համադրելի չէ:

Վրաստան

Զարգացման ամենատարբեր սցենարների քննարկման դեպքում հաճախ կրկնվող եզրահանգումները Վրաստանի դեպքում այլևս հետևյալն են.

- Վրաստանը հավակնում է դառնալ մեր տարածաշրջանի ամենաարագ զարգացող պետությունը,
- արդեն այս տարվա ամփոփագրերում կարձանագրվի կոռուպցիայի զգալի անկում Վրաստանում,
- Հայաստանի և Ադրբեջանի նկատմամբ Վրաստանը ձեռք է բերել մրցակցային այնպիսի առավելություններ, որ նրա զարգացման հեռանկարներն այլևս պետք է որ չկապվեն տարանցիկ փոխադրումների, իսկ վատագույն սցենարները՝ շրջափակման ավարտի հետ:

Եթե Արևմուտքի քաղաքականության արդյունքում ցայսօր երեք երկրների միջև որոշակի պարիտետ էր հաստատվել, ապա այժմ այդ միտումները փոխվում են բացահայտորեն հօգուտ Վրաստանի (հատկանշական են ՆԱՏՕ-ին անդամակցելու հարցում առկա վերջին զարգացումները): Դա նշանակում է, որ Հայաստանին ու Ադրբեջանին մարտահրավեր է նետված՝ լուծել փոխադարձ խնդիրները կամ դառնալ «հետնապահներ»:

Հայաստան-Ադրբեջան

Անշրջելի ժողովրդավարություն, ուղիղ գիծ, տնտեսական վերելք… Լեգիտիմացված ժողովրդավարությունն իրոք կարևոր գործոն է, սակայն թերևս որոշիչ չէ: Հայաստանի դեպքում արժե դիտարկել ժողովրդավարություն տնտեսություն կապը, քանզի.

- տնտեսական պարիտետի տեսանկյունից Ադրբեջանի նավթային հասույթները մոտ ապագայում համադրելի են դառնալու Հայաստանի ողջ տնտեսության ձեռքբերումներին,
- Հայաստանը բաց տնտեսություն է, և նպատակամղված գործունեության դեպքում, ազատ տնտեսության խաղի կանոններից դուրս, մեծ գումարներ կարող են օգտագործվել ՀՀ դեմ,
- Ադրբեջանի տնտեսությունն այսօր ապագա զարգացումների առավել կայուն հիմքեր է դնում, քանզի.
    1. Ադրբեջանի տնտեսությունում կատարվող ներդրումներն ուղղված են տնտեսական աճի կամ ազատ ռեսուրսների կուտակման կարևորագույն աղբյուրին՝ նավթային հատվածին,
    2. Հայաստանի արտաքին ներդրումների առաջնային թիրախը մեծ օբյեկտների սեփականաշնորհումն է, իսկ ներքին ուղղվածությունը՝ պասիվ կապիտալ շինարարությունը:

Մոտեցում

Եթե Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը կարող է ստատուս-քվոյի պահպանման երաշխիքը հանդիսանալ քաղաքական ու ռազմական հարթություններում, ապա երկարաժամկետ հատվածում տնտեսական հնարավորություններով պայմանավորված ուժերի հաշվեկշիռը թերևս նույնը չի մնա: Ինչ անե՞լ.

- ապահովել *ընդունվող* և վերարտադրվող ժողովրդավարություն,
- անցնել տվյալ տարվա տնտեսական աճի ծրագրային ցուցանիշների ապահովման մրցավազքից սկզբունքորեն նոր՝ առավել հեռանկարային և «մրցունակ» մոտեցումների:

Հայաստանի տնտեսական աճի ռազմավարական կարևորության համատեքստում շատերն առաջին հերթին մտածում են ներդրումներ ապահովելու և սփյուռքի հետ համագործակցության մասին: Թերևս երկուսն էլ այսօր տեխնոկրատական լուծումներ են, քանզի երկու դեպքում էլ խնդիրը համակարգային խոշորացույցի ներքո չի դիտարկվում: Ոչ թե ներդրումներ ապահովելու պարագայում համակարգային մտածողությունը պահանջում է ժողովրդավարության ապահովում, և ոչ թե միայն բանակցություններ ներդրողների հետ, ապա սփյուռքի հետ տնտեսական հարաբերությունների համակարգային մոտեցումը դեռ գտնված չէ, կատարվում է տարերայնորեն՝ սահմանափակվելով մի քանի մեծահարուստների հետ բանակցություններով: Հայաստանի զարգացման «Սփյուռք» էքստերնալիտետն այժմ կարող է աշխատել միայն խեղդվելիս:

Այսօր պատերազմը ռազմի դաշտից տեղափոխվել է տեղեկատվական դաշտ: Վաղը զուտ տնտեսական ոլորտում պատերազմի սանձազերծումից խուսափելու համար անհրաժեշտ են ամբողջովին նոր մոտեցումներ, որակյալ ներդրումներ, ֆինանսատնտեսական անվտանգության ժամանակակից մեխանիզմներև այլն:

Համառոտագիրը մշակվել է ՄԶՄԿ դեկտեմբերի 21-ի «Տնտեսություն եւ ուժերի հաշվեկշիռ. տնտեսական միտումները Հարավային Կովկասի երկրներում» թեմայով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա: Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, մամուլի ներկայացուցիչներ և այլն: